Փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

10/02/13թ. «Գյումրի-ֆզ»-«Շահումյան-ֆզ» խաղին «Շահումյան-ֆզ» թիմի ֆուտբոլիստ Հենրիկ Գրիգորյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Շահումյան ֆուտբոլային ակումբին տուգանել 7000 դրամ:

09/02/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Պոլիտեխնիկ» խաղին «Պոլիտեխնիկ» թիմի ֆուտբոլիստ Հարություն Ղարիբյանի հեռացման, հանդիսատեսի հետ վիճաբանելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Պոլիտեխնիկ» մարզական ակումբին տուգանել 30000 դրամ:

09/02/13թ. «Թալգրիգ-ֆզ»-«Պոլիտեխնիկ» խաղին մարզադաշտում կարգուկանոն չապահովելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ մարզադաշտը որակազրկել 3 խաղով և պայմանական մինչև մրցաշրջանի ավարտը, «Թալ-Գրիգ» ՍՊԸ-ին տուգանել 40000 դրամ: